ԻԶԱԲԵԼԼԱ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ
«Բիբլոս Բանկ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություն ավագ իրավախորհրդատու,
Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնի հայցորդ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ. ՊԱՏՄԱՏԵՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ-ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հոդվածի շրջանակներում ուսումնասիրվել են աշխատանքի իրավունքը, աշխատանքի ընտրության ազատությունը և աշխատանքի ազատ ընտրության իրավունքը Հայաստանի Հանրապետությունում: Երկու իրավունքների և ազատության էությունը բացահայտվել է դրանք առանձին- առանձին դիտարկելով, ինչպես նաև՝ միմյանց հետ համադրելով: Առհասարակ քննարկվել են իրավունք և ազատություն եզրույթները և հոդվածում եզրակացություն է կատարվել, որ աշխատանքի ազատ ընտրության իրավունքը իրավական առումով չի տարբերվում աշխատանքի ընտրության ազատությունից և ենթադրում է պետության պոզիտիվ պարտավորություններ:

Հիմնաբառեր- *աշխատանքի իրավունք, աշխատանքի ընտրության ազատություն, աշխատանքի ազատ ընտրության իրավունք, իրավունք, ազատություն:*

Սոցիալական երկրի կայուն զարգացումն ու տնտեսական աճն անհնար է պատկերացնել առանց մարդկանց արժանապատիվ աշխատանքի: Աշխատանքն անձի գոյատևելու համար ստեղծում է նյութական և ոչ նյութական բարիքներ՝ օգնելով նրան ինքնահիրացվել, կյանքում գտնել իր ուրույն տեղը, սոցիալական կապեր ստեղծել և արժանավայել ապրել: Աշխատանքի շնորհիվ մարդիկ ձեռք են բերում սնունդ, բնակարան, պատիվ, հարգանք, ինքնագոհություն, սոցիալական կարգավիճակ, որոնք և անմիջականորեն կապված են մարդկանց արժանապատվության հետ: Հենց աշխատանքի միջոցով ստացված և անձի համար կենսական նշանակություն ունեցող այս արդյունքներն են, որ աշխատանքի իրավունքը դարձնում են հիմնական:

Հասարակության կյանքի սոցիալ-տնտեսական ոլորտներին, հասարակության կառուցվածքին առնչվող դրույթների մասնայական ամրագրումը, ինչպես նաև աշխատանքի իրավունքի ամրագրումը մի շարք երկրների սահմանադրություններում տեղի է ունեցել երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, և առնչվել է այդ շրջանում ծագած մարդու՝ արժանապատիվ ապրելու գաղափարներին, ինչպես նաև՝ միջազգային մարդասիրական այլ սկզբունքների ու ժողովրդավարական արժեքների հաստատմանը:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, ապա այն իր առաջին անկախության ընթացքում այդպես էլ սահմանադրություն չունեցավ: Վերլուծությունները ցույց են տալիս, որ նախկին խորհրդային Հայաստանի Հանապետության առաջին սահմանադրությամբ աշխատանքի իրավունքը որպես այդպիսին՝ գոյություն չի ունեցել, և սահմանադրությունը լուծել է անձի շահագործման վերացման, շահագործողների ճնշման, հասարակությունը դասերի բաժանման, կանխման, հասարակությունը սոցիալիստական հասարակարգին ադապտացման խնդիրներ:

Խորհրդային Հայաստանի Հանրապետության հաջորդող սահմանադրություններում ամրագրված աշխատանքի իրավունքը յուրահատուկ էր այն առումով, որ պարտադրում էր բոլորին աշխատել: Այսպես, 1978 թ. ապրիլի 14-ին ընդունված սահմանադրությամբ Հայաստանի Հանրապետությունը հռչակվել էր Սոցիալիստական համաժողովրդական պետություն, որն արտահայտում էր հանրապետության բանվորների, գյուղացիների, և մտավորականության, բոլոր ազգությունների աշխատավորների կամքն ու շահերը: Այդ սահմանադրության 38-րդ հոդվածով ամրագրվել էր Հայաստանի Հանրապետության քաղաքացիների աշխատանքի իրավունքը, այսինքն՝ ըստ աշխատանքի քանակի ու որակի, և, պետության սահմանած նվազագույն չափից ոչ ցածր վարձատրությամբ երաշխավորված աշխատանք ստանալու իրավունք՝ իրենց կոչ-

www.journal.lawinstitute.am

մանը, ընդունակություններին, պրոֆեսիոնալ պատրաստվածությանը, կրթությանը համապատասխան՝ հաշվի առնելով հասարակական պահանջմունքները: Ընդ որում՝ աշխատանքի իրավունքն ապահովում էր «տնտեսության սոցիալիստական սիստեմով, արտադրողական ուժերի անշեղ աճով, անվճար պրոֆեսիոնալ ուսուցմամբ, աշխատանքային որակավորման բարձրացմամբ, և նոր մասնագիտությունների ուսուցմամբ, պրոֆեսիոնալ կողմնորոշման և աշխատանքի տեղավորման սիստեմների զարգացմամբ»:

Նույն Սահմանադրության 58-րդ հոդվածն ըստ էության սահմանում էր «պարտադիր» աշխատանքը՝ այն ներկայացնելով որպես հանրօգուտ աշխատանք. յուրաքանչյուր աշխատունակ քաղաքացու պարտականությունն ու պատվի գործն էր բարեխղճորեն զբաղվել հանրօգուտ գործունեությամբ՝ իր ընտրած բնագավառում, պահպանել աշխատանքային կարգապահությունը: Հանրօգուտ աշխատանքից խուսափելը անհամատեղելի էր սոցիալիստական հասարակարգի սկզբունքների հետ:

Ավելին, յուրաքանչյուր քաղաքացի հանրօգուտ աշխատանքի պետք է պատրաստեր նաև իր երեխային: Գործում էր «Յուրաքանչյուրից՝ ըստ նրա ընդունակության, յուրաքանչյուրին՝ ըստ նրա աշխատանքի» սոցիալիզմի սկզբունքը, աշխատանքը յուրաքանչյուր աշխատունակ քաղաքացու պարտականությունն է ու բարոյական պարտքն է ըստ «ով չի աշխատում, նա չի ուտում» սկզբունքի:

Այսպիսով, խորհրդային Հայաստանի Հանրապետությունում աշխատանքի իրավունքն ընկալվում էր որպես աշխատելու հնարավորության ստեղծում և դրա ազատությունը կապ չուներ անձի կողմից աշխատանքն ազատորեն ընտրելու հետ: Թեև աշխատանքի իրավունքը երաշխավորված էր, սակայն այդ իրավունքի իրացման՝ միևնույն ժամանակ պարտադիր լինելը սահմանափակում էր աշխատանքի ազատ ընտրության հնարավորությունը, զբաղվածության տեսակն ընտրելու իրավական հնարավորության իրացման տեսանկյունից:

Աշխատանքն ազատ ընտրելու իրավունքը Հայաստանի Հանրապետությունում ամրագրվեց հետխորհրդային շրջանում, երբ Հայաստանի երրորդ Հանրապետությունում՝ անկախացման գործընթացով սկիզբ դրվեց ազատ շուկայական հարաբերությունների համալիրը: Միաժամանակ, որդեգրվեց ժողովրդավարական քաղաքականություն, վերջ դրվեց հանրօգուտ աշխատանքով զբաղվելու պարտավորությամբ ծանրաբեռնված սոցիալիստական աշխատանքին, և անձանց համար նոր հորիզոններ բացվեցին իրենց աշխատուժն ու ժամանակը սեփական նախասիրություններին համապատասխան օգտագործելու համար: Հայաստանի երրորդ Հանրապետության՝ 1995 թվականի Սահմանադրությամբ այդ իրավունքը վերապահվեց յուրաքանչյուր քաղաքացու (հոդվ. 29), այնուհետև դրանում 2005 թվականին (հոդվ. 32) և 2015 թվականին կատարված փոփոխություններով (հոդվ. 57) աշխատանքի ընտրության ազատությունը վերապահվեց յուրաքանչյուր անձին:

Թվում է, թե խորհրդային շրջանից հետո ազատ շուկայական հարաբերություններին անցնելով աշխատանքի ազատ ընտրությունը ընդամենը չպարտադրված, չհարկադրված աշխատանք է դիտարկվելու, սակայն այն ավելի լայն շրջանակ ունեցավ: Ընդ որում, պետք է նկատել, որ անկախացման օրվանից մինչև օրս աշխատանքի ազատ ընտրությունը ՀՀ Սահմանադրությամբ ամրագրվել է և որպես իրավունք, և որպես ազատություն:

Այսպես օրինակ 1995 թվականի Սահմանադրության 29-րդ հոդվածով երաշխավորվել էր աշխատանքի ազատ ընտրության իրավունքը: ՀՀ Սահմանադրությունում 2005 թվականի փոփոխությունների արդյունքում 32-րդ հոդվածով աշխատանքի ընտրությունը ամրագրվել է որպես յուրաքանչյուր ոքի ազատություն: Ներկայիս՝ 2015 թվականի Սահմանադրության 57-րդ հոդվածով աշխատանքի ազատ ընտրությունը կրկին դիտարկվում է որպես յուրաքանչյուր ոքին վերապահված իրավունք:

Աշխատանքի ընտրության ազատության էությունը բացահայտվում է մի շարք տարրերով, որոնք մինչև օրս առանձնացվել են սահմանադրագետների կողմից: Դրանք են՝ աշխատելու և չաշխատելու ազատությունը, մասնագիտություն, զբաղմունքի (գործունեության) տեսակ ընտրելու ազատությունը, քաղաքացու (անձի) կողմից իր աշխատուժը սեփական հայեցողությամբ տնօրինելու ազատությունը[1]:

Անդրադառնալով աշխատանքի ընտրության ազատության հիմնախնդրին՝ ՀՀ Սահմանադրական դատարանն այն դիտարկել է որպես յուրաքանչյուր անհատի համար՝ առանց խտրականության աշխատանքային հարաբերությունների մեջ մտնելու և իր մասնագիտական ու այլ ընդունակությունները ազատ դրսևորելու հավասար հնարավորություն[2], ինչպես նաև՝ սոցիալական ազատություն, որն իր մեջ ներառում է աշխատանք փնտրելու իրավունքը, արդեն ձեռք բերած աշխատանքից կամայականորեն չզրկվելու իրավունքը[3]:

Աշխատանքի ընտրության ազատությունը բացահայտվում է նաև այն աշխատանքի, իրավունքի համատեքստում դիտարկելիս: Հայաստանի Հանրապետությունը, միանալով ՄԱԿ–ի Տնտեսական,

սոցիալական և մշակութային իրավունքների մասին Դաշնագրին (այսուհետ՝ Դաշնագիր), ըստ էության ճանաչել է Դաշնագրի 6-րդ հոդվածով ամրագրված աշխատանքի իրավունքը, ինչն իր մեջ ներառում է յուրաքանչյուր մարդու իրավունքն իր ապրուստի համար աշխատանքով վաստակելու հնարավորություն ստանալը, որը նա ազատորեն ընտրում է, կամ որին նա ազատորեն համաձայնում է, և յուրաքանչյուր մասնակցող երկիր պարտավորվել է ձեռնարկել հարկ եղած քայլեր այդ իրավունքի ապահովման համար (Դաշնագրի հոդվ. 2):

Դաշնագրով սահմանված դրույթների նկատմամբ վերահսկողություն իրականացնող ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների Կոմիտեն իր 18-րդ մեկնաբանությամբ նշել է, որ աշխատանքի իրավունքը չպետք է հասկացվի որպես աշխատանք ստանալու բացարձակ և անվերապահ իրավունք: Աշխատանքի իրավունքն ընդհանուր կերպով տրված է 6-րդ հոդվածում, իսկ դրա մասնավորեցումը՝ 7-րդ և 8-րդ հոդվածներում առ այն, որ յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի արդարացի և բարենպաստ պայմաններից օգտվելու իրավունք (վարձատրություն, անվտանգ և հիգիենիկ աշխատանքային պայմաններ, առաջխաղացման հավասար հնարավորություն, հանգստի, ժամանցի հնարավորություն, վճարովի պարբերական արձակուրդ, վարձատրություն տոնական օրերի դիմաց և այլն), արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց ազատ անդամակցելու իրավունք, գործադուլի իրավունք: Աշխատանքի իրավունքն իր մեջ ներառում է յուրաքանչյուր անձի իրավունքն ազատորեն համաձայնելու կամ ընտրելու աշխատանքը, որը ենթադրում է, որ աշխատանքը չի կարող որևէ կերպ պարտադրված լինել, որ անձին պետք է հասանելի լինի աշխատանքի հասանելիությունը երաշխավորող պաշտպանության համակարգը, ինչպես նաև՝ անձը պետք է աշխատանքից անարդար կերպով չզրկվելու իրավունք ունենա:

Հիշյալ նորմերի համադրված վերլուծությունից հետևում է, որ աշխատանքի իրավունքը առավել լայն հասկացություն է, այն իր մեջ ներառում է սոցիալ-տնտեսական էլեմենտներ, և աշխատանքի ընտրության ազատությունն ընդամենը կազմում է դրա մի մասնիկը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նոր փոփոխությունների արդյունքում աշխատանքն ազատ ընտրելու հնարավորությունը ազատություն կարգավիճակից փոփոխվել է իրավունք կարգավիճակի և այս կապակցությամբ հարց է առաջանում, արդյոք ինչ տարբերություն կա երկու ձևակերպումների միջև: Առանձին սահմանադրագետների կողմից «իրավունք» և «ազատություն» հասկացությունների վերաբերյալ տարբեր մոտեցումներ են ցուցաբերվում: Ընդ որում, առանձին հեղինակների կողմից այդ հասկացությունների բովանդակությունը նույնականացվում է և ընկալվում է որպես յուրաքանչյուր անձի իրավաբանորեն ամրագրված վարվելակերպի հնարավորություն[4]: Միաժամանակ, ազատությունն ավելի շատ կապված է անձի այնպիսի իրավական հնարավորությունների հետ, որոնք ուրվագծում են նրա ինքնավարությունը, պաշտպանում են անձի ներքին աշխարհը միջամտություններից: Իրավունք հասկացությունը ավելի շատ ենթադրում է որոշակի գործողություններ, ծառայություններ պետության կողմից կամ անձի իրավական հնարավորություններ՝ մասնակցելու հանրային, քաղաքական, տնտեսական կառույցների գործունեությանը[5]:

Առհասարակ ազատությունը լայն իմաստով նշանակում է անձի բնական իրավիճակ, որը բնութագրվում է նրանով, որ անձը կարող է գործել իր հայեցողությամբ: Ազատությունն ավելի նեղ իմաստով նշանակում է անձի սուբյեկտիվ հնարավորությունն իրեն վերապահված սահմանադրական իրավունքներն ու ազատություններն իրականացնելու համար կատարել կամ չկատարել որոշակի գործողություններ[6]: Առանձնահատուկ է հունգարացի իրավագետ Բրագյովա Անդրյաշի վերլուծությունն առ այն, որ ազատությունը ընդհանուր թույլտվություն է, մինչդեռ՝ իրավունքը միշտ ենթադրում է այլ ածանց պարտականություններ[7]: Ասվածից ակնհայտ է դառնում, որ ազատության պարագայում խոսք է գնում իրավական պարտավորության և արգելքների բացակայության մասին:

Նման կարծիք ունի նաև մարդու իրավունքների գծով պրոֆեսոր Ջոզեֆ Ռազը: Նա իր «Ազատության բարոյականությունը» աշխատությունում իրավունքը սահմանում է որպես այլ անձանց պարտականությունների հիմք: Ըստ նրա, եթե անհատն ունի իրավունք, ուրեմն նա կարող է այլ անձի նկատմամբ ներկայացնել որոշակի պահանջ, այսինքն՝ անհատի բարորությունը այլ անձի մոտ առաջացնում է պարտավորություն[8]:

Այսինքն, եթե համադրենք ազատության և իրավունքի բովանդակությունները, ապա անհրաժեշտ է նկատել, որ անձի ազատությունը գոյություն ունի անկախ այլ անձանց համար պարտավորություններ սահմանելուց, իսկ իրավունքը՝ հակառակը, ենթադրում է այլոց պարտավորություններ:

Այսպիսով, եթե իրավունքի և ազատության տարբերություններն առկա են, ապա դրանց համատեքստում ինչ կարելի է ընկալել ազատության նկատմամբ իրավունք ասելով: Կամ, ինչ տարբերություն կա խոսքի ազատության և խոսքի ազատության իրավունքի միջև կամ աշխատանքի ընտ-

ության ազատության և աշխատանքի ազատ ընտրության իրավունքի միջև:

Իրավական գրականության մեջ ազատության և իրավունքի հարաբերակցության հիմնահարցը շատ հաճախ հանդիպող երևույթ է, և այս հարցին նույնպես անդրադարձել են շատ իրավագետներ: Նույն՝ Անդրյաշ Բրագոյվան կարծում է, որ ազատության նկատմամբ իրավունքը բացարձակ թույլտվություն է՝ որպես սահմանադրությամբ թույլատրված վարվելակերպի տեսակ[9]:

Հունգարացի փիլիսոփա Էնթնի դե Յաշայը կտրուկ մոտեցում ունի այս երևույթին: Նա համարում է, որ ազատության նկատմամբ իրավունք եզրույթը խառնում է ազատություն եզրույթը և լրջորեն վտանգում է այն, քանի որ նմանեցնում է արտոնության[10], որը մենք որպես այդպիսին չունեինք, ուստի և անհրաժեշտ է դրա նկատմամբ իրավունք սահմանել[11]: Նա նույնպես տարանջատում է ազատությունն իրավունքից՝ նշելով, որ ազատությունը մեկ անձի և գործողության միջև հարաբերությունն է, իսկ իրավունքը երկու անձանց և գործողության միջև հարաբերություններն են, որտեղ մի անձը մյուսից կարող է պահանջել՝ կատարել որոշակի գործողություն[12]:

Թեև Էնթնի դե Յաշայի հայեցակետի մեջ կա ճշմարտության մեծ չափաբաժին և շատ փիլիսոփա-քաղաքագետների համար «ազատության նկատմամբ իրավունք» երևույթն ինքնին կարող է քննարկումների թեմա լինել, պետք է նկատել, որ մեծ հաշվով ազատության և իրավունքի միջև սահմանազատումը դադարում է էական նշանակություն ունենալ, երբ ազատությունն ու իրավունքը դիտարկում ենք որպես անձի հանդեպ պետության ունեցած պարտավորությունների հիմք: Կարելի է կարծել, թե երկու հասկացությունների վերը թվարկված տարբերությունները ենթադրում են, որ ազատության դեպքում պետությունն ունի չմիջամտելու՝ նեգատիվ պարտավորություն, իսկ իրավունքի դեպքում՝ պաշտպանելու և իրականացնելու պոզիտիվ պարտավորություն: Սակայն, ազատության պարագայում պետության պարտավորությունը միայն չմիջամտությամբ սահմանափակելը էականորեն կնվազեցներ ազատության նշանակությունը: Շատ հաճախ նույն ազատության գոյությունը պահպանելու համար բավարար չէ միայն չմիջամտելը, այլ նաև ակտիվ, պոզիտիվ գործողությունների կարիք է լինում: Սա է պատճառը, որ ազատության և իրավունքի միջև տարբերակումը դառնում է «ապարդյուն»:

Այսպիսով, վերը նշված վերլուծությունը թույլ է տալիս նկատել, որ նոր Սահմանադրությունը, աշխատանքի ընտրությունը «ազատություն» եզրույթից «իրավունք»-ով փոխարինելով աշխատանքի ընտրությանը ձևական առումով հաղորդել է ակտիվ տարր՝ ազատ ընտրության հնարավորությունների պահանջի իրավունք, սակայն իրավական առումով աշխատանքի ընտրության ազատության իրավունքը նույն հետևանքներն է առաջացնում պետության համար, ինչ աշխատանքի ընտրության ազատությունը, անկախ դրանց բովանդակային տարբերություններից:

---

[1] Հայաստանի Հանրապետության Սահմանադրության Մեկնաբանություններ /Ընդ. խմբ. Հարությունյան Գ., Վաղարշյան Ա. և այլոք, Եր., 2010 թ., էջ 1085:
[2] Տե՛ս, Սահմանադրական դատարանի 2009 թ. փետրվարի 24-ի թիվ ՍԴՈ-792 որոշումը / concourt.am.
[3] Տե՛ս, Սահմանադրական դատարանի 2010 թ. հուլիսի 7-ի թիվ ՍԴՈ-902 որոշումը / concourt.am.
[4] Алексеев С.С., Архипов С. И., и др., Теория Государства и Права, Москва, Норма, 2005, Мишин А. А., Конституционное (государственное) право зарубежных стран, Статут, 2013.
[5] Козлова Е.И., Кутафин О.Е. онституционное право России, Юристь, Москва, 1999, с.124.
[6] Баглай М.В. онституционное право зарубежных стран, Норма, Москва, 2004, с. 84
[7] Andras Bragyova, Freedom and Permission: The Constitutional Concepts of the Freedom of the Individual //Archives for Philosophy of Law and Social Philosophy, 2005 Vol. 91, No 3, p. 382
[8] Raz,Joseph, The Morality of Freedom, Clarendon Press, Oxford, 1986, p. 183
[9] Andras Bragyova, Freedom and Permission, The Constitutional Concepts of the Freedom of Individual, Archives for Philosophy of Law and Social Philosophy, Vol. 91, No. 3 (2005), p.387
[10] Էնթնի Դե Յաշայը համարում է, որ արտոնությունը ազատություն չէ, քանի որ չի տարածվում բոլորի վրա և գործում է միայն որոշակի անձանց համար / Anthony de Jasay, freedoms, “Rights” and Rights, Il Politico, Vol. 66, No. 3 (2001), p. 379
[11] Anthony de Jasay, freedoms, “Rights” and Rights, Il Politico, Vol. 66, No. 3 (2001), p. 380
[12] նույն տեղում, էջ 392

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ
1. Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Սահմանադրություն՝ ընդունված 1978 թ. ապրիլի 14-ին, Հայաստան Երևան, 1982 թ.:
2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն՝ ընդունված 1995 թ. հուլիսի 5-ին (2015 թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով), http://concourt.am/armenian/constitutions/index2015.htm , 09.05.2017 թ.:
3. ՀՀ Սահմանադրական դատարանի 2009 թ. փետրվարի 24-ի թիվ ՍԴՈ-792 որոշում, http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=50005, 09.05.2017 թ.:
4. ՀՀ Սահմանադրական դատարանի 2010 թ. հուլիսի 7-ի թիվ ՍԴՈ-902 որոշում, http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=59484, 09.05.2017 թ.:
5. Տնտեսական, Սոցիալական և Մշակութային իրավունքների Միջազգային դաշնագիր՝ ընդունված 16.12.1966 թ. և ՀՀ կողմից վավերացված 09.06.1993 թ.:
6. UN Economic and Social Council, General Comment No. 18: Article 6 of the International Covenant on Economic, Social and Cultural Rights, p. 3-4 http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=E%2fC.12%2fGC%2f18&Lang=en, 10.04.2017 թ.:
7. Баглай М.В., онституционное право зарубежных стран, Норма, Москва, 2004.
8. Алексеев С.С., Архипов С. И., и др., Теория Государства и Права, Москва, Норма, 2005.
9. Мишин А. А., онституционное (государственное) право зарубежных стран, Статут, 2013.
10. Andras Bragyova, Freedom and Permission: The Constitutional Concepts of the Freedom of the Individual //Archives for Philosophy of Law and Social Philosophy, 2005 Vol. 91, No 3.
11. Raz,Joseph, The Morality of Freedom, Clarendon Press, Oxford, 1986.
12. Anthony de Jasay, freedoms, “Rights” and Rights, Il Politico, Vol. 66, No. 3 (2001).

Изабелла Искандарян
Старший юрист-консультант ЗАО “Библос Банк Армения”,
соискатель кафедры конституционного и муниципального права института
права и политики Российско-Армянского (Славянского) университета

РЕЗЮМЕ

Основные проблемы корреляции права свободного выбора труда и права на труд: историко-теоретический обзор и сравнительно-правовой анализ

В рамках данной статьи было исследовано право на труд, свобода выбора труда, и право на свободный выбор труда в Республике Армения. Суть обоих прав и свобод было выявлено исследуя их по отдельности, а также в сочетании друг с другом.

В статье анализируются понятия свобода и право и был сделан вывод о том, что свобода выбора труда в правовом отношении не отличается от права на свободный выбор труда, и что предполагает позитивные обязательства государства.

Ключевые слова: *право на труд, свобода выбора труда, право на свободный выбор труда, право на свободу, право, свобода.*

Izabella Iskandaryan
Senior lawyer, LL.M. Byblos Bank Armenia closed joint stock company
Researcher of the department of constitutional and
municipal right of Russian-Armenian (Slavonic) University

SUMMARY

Key issues of correlation of the freedom to choose a work and the right to work; Historical-theoretical review and comparative legal analysis

Within the article the right to work, freedom of choice of employment and the right to choose employment freely in the Republic of Armenia have been studied. The essence of the two rights and of freedom has been revealed considering them separately as well as in combination with each other. The notions freedom and right have been discussed in the article and a conclusion has been made that from legal perspective the freedom of choice of employment does not differ from the right to freely choose an employment.

Keywords: *the right to work, freedom of choice of employment, the right to choose employment freely, right, freedom.*